

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, ՓԵՏՐՈՒԱՐ 21, 1930

ԹԻԻ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿՈԶՈՒՄԸ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԲԱՐԻ Է ԻՄ ՀՈԳԻՈՅՍ

ԻՆՉ ԿԲՆԱՆՔ ՏԱԼ

ՄԵԾԱԴՈՅՆ ՍՏԱՑՈՒԱԾԻԸ

ՅՕԳՈՒԱԾՆԵՐ

ԴԱՍ ՄԸ ԱԼՊԵԱՆՆԵՐՈՒ ԱՐԵԻՆ

Բ. ԵՂԻԱԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ

Պ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԵՋՆ ՆԵՐՍԷՍ

ՌՇՏՈՒՆԻ

ՈՐԶՄԸ ԵՐԿԱՐ ՊԻՏԻ ԱՊՐԻՍ

ԱՄՓ. Տ. Ճ. Խ.

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԴՈՂԷՊ» ՀԱՂԷՊ

ԱՒԵՏ. ԿԵԱՆՔ (Շարունակութիւն)

Ապրիլի 1-ի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ, Հալէպ, քաջալիւրիւննախաձեռնութեամբ մը նոր կազմակերպութիւն մը գոյութիւն տուած է, կրթական գործին աւելի վարկ տալու համար: Փետր. 13-ի գիշերը եկեղեցիի վարի սրահին մէջ երկուս հաւաքոյթ մը սարքուած էր նոյն նպատակով: Վեր. Ա. Շիրաճեան, որ կը նախագահէր, եւ Տոքթ. Ֆ. Յովնանեան խօսեցան դպրոցասիրաց ընկերութեան մը կազմութեան առաջին քայլերուն, զայն ընդարձակելու պէտքին վրայ, իսկ Տիրար Յ. Յովսէփեան բանախօսեց հայ կեանքի մասին, մասնաւորապէս Հայաստանի մէջ: Երիտասարդները իրենց բաժինը բերին երգերով եւ նուագներով:

Ամէնէն վերջ կոչ ելաւ ներկաներուն անդամակցելու համար դպրոցասիրաց ընկերութեան, որուն անդամագրութեան ներկաներուն մեծամասնութիւնը:

Նոյն Եկեղեցիի Զանից Միութեան սարքած գիշերային դասախօսական հաւաքոյթին մէջ, Փետր. 19, Տոքթ. Կ. Միսիրեան խօսած է զլիսու ցաւի պատճառներուն վրայ, օգտակար կերպով եւ իրեն յատուկ գտարճալի թօնով մը, շատ զոհ թողով սրահը լեցնող ունկնդիրները:

Տոքթ. Ա. Ապուհայութեանի վրայ վերաբուժական գործողութիւն մը կատարուած է Տոքթ. Ա. Ալթունեանի հիւանդանոցին մէջ, որ 16 օր պառկելէ վերջ կատարելապէս ապաքինած եւ իր գործին վերադառնալու սկսած է: Մեր խնդակցութիւնները յարգելի բժիշկին:

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԼՅԱՆ ՄԷՋ

Պատ. Յ. Ղազարոսեան, «Բանբեր»-ի խմբագիրը, Յունիս 26-ին հովիւ կը ձեռնադրուի Րիւ Կրիսիայի Ֆրանս. Աւետ. Եկեղեցիին մէջ, Մարտէլ: Զեռնագրութեան կը մասնակցին ֆրանս. Աւետ. Եկեղեցիի 7 հովիւներ, Վեր.

Մ. Փափագեան, «Աքսիօն Քրէթիէն»-ի նախագահ Տր. Պէրօն, Գեր. Գրիգորիս Եպիս. Պալաքեան եւ Տ. Միւսոպ քահանայ: Ֆրանսահայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան միակ առաջին հայ հովիւն է, որ կը ձեռնադրուի այդ երկրին մէջ: «Նոր Աւետարտ» խնդրութեամբ կ'ողջունէ այս կարեւոր գէպը ֆրանսահայ աւետարանականութեան համար եւ շնորհաւորելով ձեռնադրուին եւ Եկեղեցիին կը մագթէ աստուածային առաջնորդութիւն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն յարգելի հասարակութեան, կը յայտարարենք թէ կառավարական գործառնութեանց մէջ կարելի ամէն դժուարութեանց, եւ թէ ալ տեղւոյս վրայ մէկէ աւելի Հայ Աւետարանական Եկեղեցիներու գոյութեանը պատճառաւ հաւանական բոլոր թիւրիմացութեանց առաջը առնելու նպատակաւ Եկեղեցւոյս տնուան մէջ պլակի փոփոխութիւն մը մտցնել հարկ տեսնուած է:

Ուստի ցարգ Պէյրութ Բաղաֆի Հայ Աւետարանական Եկեղեցի անունով ծանօթ եկեղեցիս յետ այսու պիտի կոչուի ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻ, Պէյրութ, Լիբանան:

Եկեղեցւոյս հովիւն է.—

Վեր. Ա. Կէօքկէօղեան

Ամերիկեան Տպարան

Պէյրութ, Լիբանան:

ՄՍՍՍԱՆՔ

Գերմանիայի Ա. տարուան առաջին թիւը, եռամսեայ հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան Ամերիկայի Շրջանակին, փափաքող հայրենակիցներ կրնան զայն ունենալ դիմելով մասնաճիւղերուն կամ խմբագրութեան հասցէին. K. H. Kalousdian, Room 1006, 331 Fourth Ave, New York, N. Y.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՐԱՊ, ՓԵՏՐՈՒԱՐ 21, 1930

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԿԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿՈՉՈՒՄԸ

Աւետարանական եկեղեցիները կոչուած են իրենց սեպհականութիւնները ուրիշներուն փոխանցել: Աստուծոյ խնայեալն:

Աստուծոյ մէջէն է ժողովրդային լիզուով գրուած բաց Ս. Գիրք մը: Եկեղեցին բոլոր աւետարանութիւններէ մերկացած պարզապէս չորս պատերով շրջապատուած է: Պաշտամունքը կը բաղկանայ ամենապարզ կերպով Աստուծոյ աղօթիկէ, Ժողովրդին կողմէ եղած երգեցողութիւններէ և հովուին կողմանէ եղած քարոզէ: Անիկա ուղղակի մարդու հոգիին և հոգի եղող Աստուծոյ մէջտեղ կատարուող բան մըն է: Եթէ պաշտամունք չկայ հաւատացեալներու սրտին մէջ երբեք բան մը չկայ:

Ուրիշ բան մ'ալ՝ անոնց ազատ, ռազմավարական կազմակերպութիւնն է, այնպէս որ եկեղեցական գործերու վարչութիւնը եկեղեցիի անդամներուն ձեռքը կը գտնուի:

Աւետարանական եկեղեցիներու խորհող անդամներուն համար աստուծոյ թանկագին և նշանակալից բաներ են: Մանաւանդ շատ կարեւոր կը նկատեն բոլոր ժողովրդին ձեռքը իրենց ազգային լիզուով Ս. Գիրքին գտնուելը, զոր պէտք է ջանան զայն տարածելու: Պաշտամունքի ձևին և էկեղեցական կազմակերպութեան մասին գաղափարի տարբերութիւններ կրնան գտնուիլ, և բոլոր այս կէտերու մէջ ամէնուն ազատութիւն պէտք է տրուի: Բայց աստուծոյ աւելի

կենսական կէտեր կան:

1. Հոգեւոր նոր փորձառութիւն մը կայ: Պօղոս զանիկա կը կոչէ այն շնորհքը որուն մէջ կը կենանք եւ կ'ըսէ թէ մենք անով կ'աւելանանք: Աւետարանական եկեղեցիները նախնական, քաղաքական կամ վաճառականական բան մը չունին ուրիշներու փոխանցելու համար: Անոնց մասնաւոր սեպհականութիւնները հոգեւոր են: Պետրոսի նման անոնք կ'ըսեն թէ հոգիի փրկութիւնը իրական փրկութիւնն է, (Ա. Պետր. 1. 9, 5. 12): Անոնք ինչ որ ունին ուրիշներու կուտան: Անիկա պատուական է անոնց համար որ կը հաւատան (Ա. Պետ. 2. 7):

2. Ապրելու նոր կերպ, կեանքի նոր ճամբայ մը կայ, որ ոչ թէ ինքնահետաքրքրութեան այլ ուրիշներու օգտակար ըլլալու և սիրոյ վրայ հիմնուած է: Անիկա արքունական օրէնք կոչուած է Յակոբոսի թուղթին մէջ (Յակ. 2. 8): Անիկա աւելի երջանիկ, աւելի խաղաղ, աւելի օգտակար, աւելի լաւ ճամբայ մ'է: Անիկա Հոգիի կողմանէ ապրուած կեանք մ'է, և այսպէս ապրելով մարդ մը՝ իրապէս Աստուծոյ պատկերին համեմատ ըստեղծուածի պէս կը շարժի: Այս մարդկութեան արժանի կեանք է:

3. Հաւատացեալները գիտեն թէ այս փորձառութեան և այս կեանքին գաղափարները ուր պէտք է գտնել: Գաղտնիքը սա է որ Տէր Յիսուս մարդուն սրտին մէջ կ'ապրի: Եւ Ան ասիկա պիտի ընէ, եթէ մէկը իրեն վստահի և հնազանդի կամքը բոլորովին իրեն յանձնելով: Քրիստոս ձեր մէջ՝ փառաց յոյսն է (Կող. 1. 27):

Աւետարանական եկեղեցիներու կո-

չումն է այս փորձառութիւնը, ապրելու այս կերպը, այս ներքնակեալ Քրիստոսի մասին վկայութիւնը փոխանցել անոնց, որ զանոնք չունին: Մենք Քրիստոսի խորհուրդը, գազանիքը խօսելու կանչուած ենք (կող. 4. 3): Սուրբ Մէջ եկեղեցիները իբր մարմին ա՛յս կատարելու կանչուած են: Եկեղեցիներու մէջ ամէն հաւատացեալ անհատ, իր շրջանակին մէջ ամէն օր այս ընելու կանչուած է:

Ճ. Ի. Մէրիլ

ՇՈՂԵՐ

«ԲԱՐԻ Է ԻՄ ՀՈԳԻՈՅԱՆ»

1874ին մէջ «Լը Վիլ տը Հափր» շաբաթիկան Ստեփանյան Թրանսի կը դառնար: Ծամբորդներուն մէջ կը գտնուէին Տիկին Սփէֆօրտ և իր չորս զաւակները: Աղլանդեանի ճիշդ մէջ տեղը ուրիշ նաւի մը զարնուելով կէս ժամուան մէջ ընկղմեցաւ ան. գրեթէ բոլոր ճամբորդները փրկուեցան: Տիկ. Սփէֆօրտ իր զաւակներով կամրջալը ելաւ և ամէնը ծնրազիր աղօթեցին: Քիչ վերջը ամէն ինչ անհետացաւ: Նաւորդ մը մինչ նաւուն անհետացած տեղին վրայ նաւակով կը պոռտէր տեսաւ որ Տիկ. Սփէֆօրտ ջուրին մէջ կը լողայ: Տասը օր վերջը Տիկ. Սփէֆօրտ Քարտիֆ հասնելով իր ամուսնին կը հեռագրէ. «Մինակս ազատուած:» Մը. Սփէֆօրտ, որ քրիստոնեայ մըն էր, Շիգակոյէն Անգլիա կը փութայ իր կինը բերելու համար: Մուտի այս լսելուն պէս Էսթիպուրկէն Լիփփրփուզի կ'աճառարէ վշտալից ծնողները մխիթարելու համար. բայց մեծապէս կ'ուշախառնայ տեսներով որ անոնք տակաւին կրնան ըսել. «Աստուծոյ կամքը ըլլայ:» Մը. Սփէֆօրտ այս տրկածէն ներշնչուած կը հեղինակէ ծանօթ երգը.

Երբ խաղաղութիւն իբրեւ փետ կը
յորդէ
Կա՛մ ցաւք իբր ալիք հողմայոյզ
Ինչ որ է բաժինս ուսուցիր զու ինձ թէ
Բարի է, բարի է իմ հոգւոյս:

ԻՆՉ ԿՐՆԱՆ Բ ՏԱԼ

Անգլիոյ մէջ մեթոտական եկեղեցիի մը հիմնարկէքի արարողութեան պահուն խօսող մը պատմեց թէ շատ աղքատ կին մը հինգ սթէրլինկ նուիրած է եկեղեցիին շինութեան համար: Երբ կնոջ կը հարցուի թէ այսչափ գումար մը վճարել իրեն համար ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ, բարեպաշտ կինը կը պատասխանէ. «Այս գումարը երկար տեսնէ իվեր խնայուած երեք փէննինոց դրամներուն մէկ արդիւնքն է, զոր յառաջ բերելու համար զրկումներու ենթարկեցի ինքզինքս չգոհացնելով իմ անհրաժեշտ չնկատած պէտքերս, իրականին մէջ առանց չաքարի թէյ գործածելով և յաճախ առանց թէյի տաք ջուր խմելով և նման արարքներով:»

ՄԵՄԱԳՈՅՆ ՍՏԱՑՈՒՄԵՐ

Պարոն մը իր մէկ բարեկամին հետ օր մը իր տան տանիքը ելաւ իր ստացուած քնիքը անոր ցուցնելու համար: «Նայէ», ըսաւ ան, «ահա իմ կաշուածներս, կը տեսնէ՞ք այդ հեռաւոր աղաւթակը, անիկա իմն է:» Ապա ուրիշ կողմ մը դառնալով, «Այդ կարմիր ապիւսէ տունը կրնա՞ք տեսնել, այն ալ ինձի կը պատկանի» ըսաւ: Բարեկամը անոր դառնալով և հանդարտ կերպով անոր ըսաւ. «Կը տեսնէ՞ք այդ հեռակայ պղտիկ վիզը, հոն՝ պղտիկ խրճիթի մը մէջ կին մը կը բնակի, որ այդ ամբողջէն աւելին կրնայ ըսել:» «Ի՞նչ կրնայ ըսելը» կը բացականչէ Պարոնը: «Անիկա ֆիլոնայալաւ, Քրիստոս իմն է», կը պատասխանէ բարեկամը:

ՏՈՒԱՅԱ ՊԻՐ ՏԱՎԷԹ

ՈՒՄՈՒՄ ՏՈՒԱ ԿԻՒՆԻԻ—ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏ 7-1930

«Վէ Պէն եւրոէն երւքսէյէ գալորըրլորդմտա
ճիւմլէյի քէնտիմէ չէքէճէյիմ:» Յոպհ. 12. 32:

Հէր տիյարըն Բրիսթիյանլարը իլէ պէրապէր Մարտ 7, 1930
տա ճէմաթընը իլէ ըուհանի խըզմէթէ հիսսէտար օլմաղլէ վէ
Պենտէկոստէ կիւնիւնիւն պու 1900նճի սէնէ ի տէվրիյէսինտէ պաշ-
գալար իլէ հէր կիւն տուա էտէրէք՝ պիր Տիւննա Տուա Միւշարէֆէրինէ
տափէթ օլունուրսընը:

«Աղչամ վէ սապահ վէ էօյլէ վազթը ահ ու ֆիղան էտէ-
ճէյիմ 0 տախի սէսիմի իշիտէճէք տիր:» Մէզ. 55.17:

Աթիտէքի մատտէլէրի Ֆիլիփին ատալարընտան օլան պիր
կէնճ գատըն հաղըրլամըշ տըր. հէր եէնի կիւնտէ իւք թէֆէքքիւրիւ-
միւզ պուշլար հաղըրնտա օլսա սէզա տըր:

ԿԻՐԱԿԻ: Տուա էյիք ֆի—

Բրիստոսըն քիլիսասընտա օլանլարըն ճիւմլէսի պու Մարտ 7,
1930տա օլան Ումուլմ Տուա Կիւնիւնէ թէտարիք օլմաղ իւզըէ, քէն-
տի քէնտիլէրինի ճան ու տիլտէն նիյաղա վազֆ էյլէսինլէր:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ: Տուա էյիք ֆի—

Պիզ էֆէնտիմիլին ըուհու իլէ տօլալըմ վէ իւք շակիրտլէրին
մուհապպէք վէ վազֆ ը նեֆա ըուհունը իպրազ էտէլիմ. պուշլարըն
արստընտա գատընլար տախի վար իտի:

ԵՐԵՔՇԱԲԹԻ: Տուա էյիք ֆի—

Ալլահըն Քիլանընըն նուրու ճիւմլէ սալահըն ճիտտի արայանլա-
րըն գալպլէրի իւզէրինէ տօղուպ՝ էօմըլէրինի իրչատ էյլէսին:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ: Տուա էյիք ֆի—

Բրիսթիյանլար Բրիստոս իշիւն շեհասէք էթմէք ֆուրտաթընա
տաիր ուշանսընլար վէ Րապպը հալա պիլմէյէնլէր տիրի Բրիսթիյան
թէճրիպէ ի շախսիյէսի իլէ Անը պուշլուշլար:

ՀԻՆԳՇԱԲԹԻ: Տուա էլի քի—

Տիւնեանքն կէնճլէրի ճիւմլէ գաղիլիյէթլէրինի Ալլահըն մէլէքլէ-
թիւնի պինա էթմէյէ վազֆ էյլէսինլէր վէ մէսէրրէթլէ էօմրլէրինտէ վէ
փէյլամլարընտա, Անա վէ Անըն գուզվէթինէ շէհատէթ էտէպլիլինլէր:

ՈՒՐԲԱԹ: Տուա էլի քի—

Մուհապպէթ րուհու ինսանլարըն ճիւմլէ Ֆաալիյէթինտէ
հիւքմֆէրմա օլսուն վէ տահա ալա պիր անլայըշլէ հէր ճինստէն օլան
ստէմլէր ումուրի պիր պիրատէրլիյէ թէշվիդ օլունսունլար:

ՇԱԲԱԹ: Տուա էլի քի—

Պու սէնէ (1930) Պենտէկոստէնին պու 1900նճի սէնէ ի տէվրի-
յէսինտէ հէր տիյարտաքի Քրիսթիյան քիլիսէսի Րուհուն գուզվէթինէ
եէնիտէն մալիք օլսուն վէ Յիսուսըն թապիլէրինին եէվմի սատէ շէ-
հատէթլէրիյէ ՔէնՏիՍի թէքրարէն եիւքսէյէ գալաւըրըն:

ԱՄԵՐԻԳԱՆԸՆ ՔՐԻՍԹԻՅԱՆ
ԳԱՏԸՆԼԱՐԸ ԹԱՐԱՖԸՆՏԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԴԱՍ ՄԸ ԱԼՊԵԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՒԷՆ

Բա՛րձր են Ալպեան կատարները. այդ է թէ ինչու արեւը հոն կը հանգչի երկարօրէն: Առաջին ճառագայթները անոնց վրայ կը թաօին, եւ վերջինները հոնկէ՛ կ'առնեն իրենց հրաժեշտը: Երբ դեռ մթութեան մէջ կորսուած են միջակ բարձրութիւնները, Մօն Պլանի երբեակ գագաթները վառուած են արդէն արեւու լոյսով: Եւ ի՞նչ լոյս. բոցավառութիւն մը որ այդ «Սպիտակ Լիռ»-ան ճերմակութիւնը բեկ բեկ գոյնիւրով կը ցուցնէ չորս կողմ:

Այսպէս են նաեւ քարձր կեանքերը: Զէ՞ որ բարձրութիւն եւ լոյս զիրար կը փնտռեն եւ կը սիրեն: Երբ դեռ բոլոր-տիքի հասարակութիւնը մթութեան մէջ կը մոլորի՝ անոնք վերերէն լոյսի երանգներ կը բռնեն եւ շեղը շեղը կը ցուցնեն վար:

Միշտ չեմ տեսներ, սակայն, Մօն Պլանը իր այդ վեհութեանը մէջ: Ահա ձմեռը կը պաշարէ մեզ: Եւ քանի լէմանի եզերքէն վեր առնեմ աչքերս եւ դիտեմ օրէ օր ճերմակ բարձունքներէն ձիւնին դէպի վարերը՝ մինչեւ շրջակայ բլուրներն ու մեր սեմերուն առջեւը իջնալը, անգրագարծում մը կ'ունենամ ձմեռնային փորձառութեան մը որ երբէք չէ խողած յիշողութիւնս:

* * *

Աննախընթաց է ցուրտը Զուրիգերիոյ մէջ: Հողը մինչեւ իր խորութիւնները քար սառ կտրած է: Զուրի խողովակներ ճնշումէն կը պայթին: Իսկ հողէն վեր, ծառերը՝ կմախք դարձած՝ կը դողդղան հիւսիսային հովի արշաւէն: Լէման կը կրկնէ իր հազուադէպ պատմութիւնը. իր յստակ ջուրերը ալի՛ք ալի՛ք սառէ ճերմակ կեղեւի մը ներքեւ առած է ան:

Բայց այս երկրին մէջ ձմեռն ցուրտ օրերն ալ ունին իրենց տեսակ մը հաճելիութիւնը: Մարդ կը սիրէ թափառիլ միայնակ լէմանի եզերքները, «Մօն Պլանի կամուրջ» էն դիտել սառի խոշոր սկաւառակներուն զիրար հիմնակներէն, կոտրտուելէն սահելով՝ կամուրջէն վար կախուած երկաթէ ցանցերուն առջեւ իրարու վրայ տեղ տեղ կուտակուիլը, կամ լճին մէջ սառէ բռնուած նաւերու ինքնաշարժման ճիգերը, եւ կամ քաղաքէն դուրս՝ լճին եզերքի քարակոյտներուն եւ հեռագրաձողերուն վրայ նետուած ատեննին ցուրտէն բռնուած ու սառոյցի վերածուած ալիքներուն առած այլանդակ, ֆանթասթիկ ձեւերը— սիւներ՝ հաստ ու բարակ, մաշած արձաններ, անձաւներ, դուրս ցցուած սրածայր խութեր, խորշեր, կամարներ— գոզցես ճերմակ մարմարէ քաղաքի մը փրկատակներն ըլլային անոնք:

Հետաքրքիր՝ այդ սառակոյտներուն մէջէն կ'անցնիմ դէպի սառած լճին բացերը, փորձելու համար սառի կեղեւին տոկոլնութիւնը: Բայց հաղիւ թէ 8-10 մէթր յառաջացած եմ, ոտքերուս ներքեւ սառը կը ճաթըրտայ, եւ ևս... կը փախչիմ ետ: Կատակ չէ լճին վրայ քալելը:

Տո՛ւն վերադարձիս ընկերներ կը կանչեն:

—Ո՛ր ես. չգա՞ս մեզի միանալ: Վաղը լեռ կ'ելլենք սքի ընելու:

—Խելքերնի՞դ եկաւ. այս ցուրտին լեռ բարձրանալ կ'ըլլա՞յ: Զիւնին վրայ սահելու տեղ կը սառինք: Այս ցուրտին սքօրքի չերթացուիր:

Բայց անոնք համոզուած են.

—Լեռը ձիւն կայ, ոչ ցուրտ: Աղուոր արեւը հոն է միշտ: Վաղը մասնաւոր կառախումբ կայ: Օթօպիւսին մէջ մեզի համար ալ տեղ վարձուած է արդէն:

Հետեւեալ առտու ժամը 5ին վեր ենք: Ոտնասահնակի տախտակները զոյգ զոյգ

ուսերնիս առած, կ'շտապենք՝ հինգ հոգի: Մեր խոշոր ոտնամաններուն ներքեւ գետինը կը սահի. սառած է: Ծովը պինդ յամառութեամբ մը կուգէ մեր ականջներու փաթթանքէն ներս թափանցել: Կը յիշեմ որ երկու օր առաջ գիւղէն վերագարձողի մը ականջները սառած՝ հիւանդանոց տարուեցաւ: Թնոլորտը թանձրացած է մշուշով: Իսկ վերեւ կախուած ամպերը կապարի պէս կը ճնշեն վրաս: Իրեթէ զղացած՝ չեմ կրնար զսպել տըրտունջքս:

—Այս օդով լեռներու վրայ արեւ փնտռելու ելլելը անմասնիւն է՝ միթէ:

—Անհաւատ ես, կը պատասխանեն անոնք:

Վերջապէս, ահա Օրսն: Մշուշի մէջէն վեր վեր կը մազլցինք: Անիւններուն վրայ շղթայ փաթթուած է, որ ձիւնէն չսահին: Մեր շունչին խոնաւութիւնը դուրսի ցուրտէն ապակիներուն վրայ սառի խաւ մը կազմած է, որ մեզ կ'արգիլէ դուրսը գիտելէ:

* *

Չեմ գիտեր որքան կը տեւէ այս անձկալի ճամրորութիւնը: Յանկարծ կը նկատեմ որ ապակիներուն սառէ խաւը կը հալի: Տափ է դուրսը: Որոշ կը տեսնեմ որ մշուշ չկայ այլեւս:

Քիչ վերջը Օթոն կանգ կ'առնէ «Սբ. Սարգիս Լեռ»-ան զբօսավայրերուն առջեւ: Հետաքրքիր դուրս կը նետուիմ: Ի՞նչ տեսնեմ. օր, օ՛ր, փառաբանելի օր: Լոյս, արեւ, կիսմիջ օր խայտառ: Սար ձոր բռնած ձիւն մը եւ արեւ մը որ իրարու հետ հաշտուած են. ոչ մին միւսին կը գնասէ: Միայն թէ ձիւնին վրայ արեւուն պարիւր մեր աչքերը կը խողտացնէ: Վերը՝ պայծառ ու թափանցիկ կապոյտով երկինք մը որուն ցուքերը ձիւնին կուտայ անուշ այլ խորհրդաւոր գոյն մը: Իմացնի՜ս՝ Ալպ-հաններու փառաշուք շարքը, գիւրեմք մինչեւ մէջքերնին պաշարած ամպերու

մէջէն զլուխնին բարձր բռնելու ճիգով մը գէպի երկինքը բաժնի խոյանքին մէջ կը տքնին, կը քրտնին արեւուն ներքեւ: Մինչ վարը՝ երկու լեռնաշղթաներուն մէջի անհունութիւնը հարթ հաւասար լեցուած է ոլորուն ամպերու թանձրութիւնով մը, որ ալեկոծուած եւ ճերմկած ատենը անշարժացած ծովու մը տպաւորութիւնը կը թողու: Մարդ կ'ուգէ մէջը նետուիլ. ա՛յնքան անուշ կուգայ անոր կեանքը խորերէն:

Հապա՛ շրջակայ բլուրներուն տեսարանը: Ամէն կողմ երիտառարդներու, երիտառարդուհիներու, ընտանեօք եկածներու բազմութիւններ թեւաւոր թռչուններու կը նմանին՝ իրենց ոտնառահնակներովը, բլուրներն ի վար նետերու պէս սուրալէն սահած աստիճան, երբեմն թաւալղուր ձիւնեղու մէջ տապալակելով: Մենք ալ կը խառնուինք այդ խումբերուն: Եւ այդպէս օրն ամբողջ:

Պարզապէս մեղանչում մըն է այդպիսի տեսարանի մը առջեւ, փոխանակ մանուկի մը պէս հրճուելու, թոյլ տալ որ միաքը երթայ տեսարանէն անդին խորհրդածութիւններու հորիզոնին վրայ յածի: Սակայն կան խորհրդածութիւններ որոնք վրադ կը խուժեն յակամայս: Արդ՝ այն օրուան փորձառութիւնը մտքիս վրայ դրոշմած է ազուր դաս մը:

Հակասութիւն. առտուն վարի՛ քաղաքին՝ մառախլամած մթնոլորտը ա՛յնքան նախապաշարուած էի, որ անկէ դուրս՝ արեւոտպայծառութեան մը զոյգութեանը չէի կրնար հաւատալ: Գոհ էի քաղաքի կանքովը, է նոյնիսկ կը տրանջայի որ զիս անկէ դուրս՝ տարբեր տեղ մը առաջնորդելու ջանքեր կ'ըլլային: Երբ վերը կը նայէի, ամպէ զատ ոչինչ կը տեսնէի: Իսկ հիմա, որ անզգալաբար ամպերու խաւերուն վերի կողմը անցած եմ եւ պայծառութեան

մէջ կը գտնուիր, այս անգամ ալ՝ վարդաբաժնի չեմ կրնար տեսնել միւս կողմը։ Կը նայիմ վար, եւ՝ դարձեալ՝ ամպի ծով մը կը տեսնեմ լեռներու ստորոտը։ Նոյն ամպերն են որ առաջ վերի պայծառութիւնը խլած էին տեղուկութենէս, իսկ հիմա՝ վարի քաղաքներու կառուցուածքը։ Դժուար է երկու կողմերն ալ՝ վերնու վարը մէկէն տեսնել։ Բայց գիտեմ որ վարի քաղաքի կառուցուածքն ու կեանքն ալ իրականութիւն մըն է, եւ իրեն կը պարտիմ հոս գտնուիլս։

Հանգստութեան եզր մը կը տեսնեմ այս իրականութեան և կիանքի մասին մարդկային ըմբռնումի միջև։ Կան մարդիկ որոնք նիւթական կեանքի կառուցուածքներուն երկաթեայ իրականութեանց այնքան մօտէն յառած են, որ լուր չեն ունենար հոգեկան արփալիւր կեանքի մը բարձրութիւններէն։ Անոնք վեր կը նային և կը տեսնեն միայն ամպ ու մշուշ, և ուստի խնդրական կը նկատեն նիւթականէն վեր՝ հոգեկան կեանքի մը իրականութիւնը։ Կը յանդգնին նոյնիսկ հեղեղու զանոնք որոնք կը հաւատան այդ իրականութեան։

Ասոնց հակառակ, կան մարդիկ որոնք՝ քաջուած հոգեկան ոլորտներուն մէջ՝ դիւրաւ կ'անտեսեն վարի նիւթական կառուցուածքներու իրականութիւնը, երբ իրականութեան մէջ անոր կը պարտին իրենց գոյութիւնը՝ և ետ չեն կենար անոր ընծայած գործնական բարիքները վայելելէ։ Նոյնիսկ պատրաստ են զայն ուրանալու։ Ասոնք ալ երբ վար նային ամպ ու մշուշ միայն կը տեսնեն։

Երկու պարագաներու մէջ ալ, մէջտեղի ազդեցութեան և նախապաշարումներու նոյն ամպերն են որ արգելք կը հանդիսանան ուղղակի յարաբերութիւններու։ Բայց երբ օր մը, հետաքրքրութեան համար կամ համոզումով, վերէն վար և վարէն վեր փոխադարձ ճամբոր-

դութիւններ կատարուին, երկու կողմէ նախապաշարեալներն ալ մէջտեղի ամպերու խառնրէն պիտի անցնին անզգալաբար և պիտի ճանչնան երկու կողմի իրականութիւնները։

Եւ երբ նիւթական իրականութիւններու մէջ սնանողները թերահաւատ չգտնուին հոգեկան իրականութիւններու վերաբերմամբ, և փոխադարձաբար՝ հոգեկան վերացումներ ճանչցողները դատապարտողներ չլլան նիւթական իրականութիւնները, յայնժամ երկու տեսակէտներու ալ հաշտ նկատառութիւնէն պիտի հետեւի հեշտ եւ օրհնալից կեանք մը՝ լի ներշնչումներով բոլորին համար։

Ներմուծել պէտք է, նիւթապաշտութեան մէջ աւելի հոգեկանութիւն, իսկ հոգեպաշտութեան մէջ՝ աւելի նիւթականութիւն, այլ խօսքով՝ առարկայականութիւն, իրատեսութիւն։ Ահա թէ ինչ դաս քաղեցի այն օրուայ փերձառութենէս Ալպեաններու գիմարը։

Ժընև

Մ. Բ. ԵՂԻՍԵԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ

«Ով պիտի զատէ մեզ Բրիտանոյի սէրէն, տառապանքը, կամ նեղութիւնը, կամ հալածանքը, կամ սո՞վը, կամ վտանգը, կամ սո՞ւրը... վասնզի ես հաստատ գիտեմ որ ոչ մահը, եւ ոչ կեանքը, ոչ իշխանութիւնները, ու ոչ զօրութիւնները... եւ ոչ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն, որ Բրիտանոյ Յիսուս մեր Տէրովմով է։»

Պօղոս առաքեալ ինչ որ կը գրէր Հռովմի եկեղեցիին, հայ ազգը կապրէր զայն չորս դարեր յետոյ։ Անհատներուն գրուած ճշմարտութիւն մը ամբողջ ազգի մը մէջ կը մարմնանար, եկեղեցիի մը համար գրուած սկզբունք մը ազգի մը խորհրդանշանը կը դառնար։ Պօղոսի հաւատքը, անոր «Վասնզի ես հաստատ գի-

տեմ»ը, թէն չուղղուած հայ ազգին և հայ եկեղեցիին լուսադոյն արդարացումը կը գտնէր այն լեռնոտ երկրի տնտաշ և պարզ ժողովուրդին մէջ, որ իրաւունք ոչ մահը և ոչ ալ զօրութիւնները կըրնային զատել հայ ազգը Աստուծոյ սէրէն որ Քրիստոս Յիսուսով է:

Վարդանի գէպքը մեր ամենուն ալ ծանօթ է: Տասնեհինգ դարեր ատաշ, երբոր այժմեան մեծ Քրիստոնեայ ազգերը անտառներու մէջ կը թափառէին և խոզ արածելով գրազուած էին, երբ հիմակուան ամենաքաղաքակրթեալ սեպոտած ազգերու նախնիքները իբր պաշտամունք իրենց զաւակները կ'այրէին խարոյկներու վրայ, հոն, Հայաստանի մէջ ահագին պայքարը սկսած էր Քրիստոնէութեան և Արեւելքի գրաւիչ կռապաշտութեան միջև: Եւրոպան բուլղոլին խաւարին մէջ թաւալուն, Ամբիկայի վոյութիւնն իսկ անծանօթ, Հայը միայնակ կը պայքարէր Պարսից Սասանեան հարստութեանը դէմ ի խնդիր իր կրօնքին և խղճին ազատութեան: Պայքարը անհաւատար էր, երբոր նկատի առնենք կռուողներու բազմաթիւական ոյժն ու թիւը: Պարսից Տէրութիւնը, Արեւելքի միակ հզօր ազգակը, իր գերիշխանութեան ներքեւ առած էր բոլորը, Հայաստանն ալ նոյն բախտին էր ենթարկուած, հպատակ ազգ մըն էր այն իր վեհապետին կամքին ենթակայ:

Պայքարը սկսաւ ասանկ և դարեր տեւեց, Հայ ազգը իր ներքին և հոգեկան լուսադոյն ոյժերը ի յայտ բերաւ ի սպաս իր կրօնքին:

Վարդանի պատմութիւնը մէկ զըրուագն է միայն այդ հերոսական պայքարին: Վարդան և իր ընկերները կանգնեցան քաջաբար, մաքառեցան յուսահատօրէն եւ ինկան հերոսաբար: Իրենց նահատակումը մղեց Հայ ազգը ինքնագիտակցութեան, Քրիստոնէութիւնը նոր ոյժ մը ստացաւ իրենց արիւնէն, և Հայ

ազգը այդ օրէն սկսեալ լուս ու մունջ տառապեցաւ, մարտիրոսացաւ բիւր անգամ եւ ամէն օր որպէսզի խաչի կըրօնքը իր լուսադոյն մարմնացումը գըտնէ իր վրայ: Հայկական պատմութիւնը Չորրորդ դարէն սկսեալ մարտիրոսացումի պատմութիւն մը եղած է: Քրիստոնէութիւնը Հայ ազգին թաքուն ոյժերը յառաջ բերեր է և այն իր տառառապանքներուն մէջ գեղեցկացեր և բիւրեղացեր է: Խաչի կրօնքը իրապէս խաչ է նշանակեր Հայ ազգին, որուն լուսադոյն պատմութիւնը հոն է, իրական ներշնչարան մըն է այն բոլոր անոնց որ զայն կը սերտեն, սրբութեան խորան մըն է ուր բոլոր Քրիստոնեաները յարգանքով, երկիւղածութեամբ և անձնաքննութեամբ պէտք է մօտենան անոր:

Նպատակս չէ Վարդանանցի եւ անոր յարակից գէպքերու վերլուծումն ընել, ատիկա պատմաբանին գործն է: Բայց այսօր ինչ որ ես կը փափաքեմ մատնանշել, Վարդանանցի այսօրուան պատգամն է մեզի և բոլոր Քրիստոնեայ աշխարհին:

Ներկայիս ժամանակները փոխուած են, որուն իբր արդիւնք մտայնութիւններն ալ փոխուած են, բայց ըկրզունքներն միեւնոյն են և կը մնան: Վարդանանցը մեզի պատգամ մը ունի տալիք. ան գոհողութեան կոչ մըն է բարձր ըսկըքունքներու և իտէալներու, լլնան տնոնք կրօնական, բարոյական և ընկերային: Ամէն դար իր ուրոյն պահանջները ունի, ամէն դար իր ուրոյն գործելակերպը ունի: Ժամանակները փոխուած են, նմանապէս մեթոսներն ալ պէտք է փոխուին: Վարդան և իր ընկերները սուր ի ձեռին մարտնչեցան և ինկան իրենց և իրենց ազգակիցներուն կրօնքին պահպանման համար: Անոնք բայց իրենց անկման մէջ յաղթանակեցին: Փառք պարտուածներուն... ներկայ ժամանակը այդ տեսակ մեթոս մը չի պա-

հանջեր: Այսօր հարկ չի կայ քրիստոնէութիւնը պաշտպանելու: Բայց կոխը ուրիշ մարդերու վրայ է փոխադրուած, Աւարայրի դաշտերէն սկզբունքներու լեռնազագագթները փոխադրուած է ան և կոխը աւելի սոսկալի ու ահեղ է: Վարդան և իր ընկերները կռուեցան իրենց մէջ շատ աւելի զօրաւոր թշնամիներու դէմ, այսօրուան խաւարի և մեղքի ոյժերը նոյնքան և զույգ աւելի զօրաւոր են: Նոր Վարդաններ անհրաժեշտ են որպէսզի լոյսը յաղթանակէ խաւարին:

Այսօրուան Քրիստոնեայ աշխարհը անողոք պայքար հռչակած է նիւթապաշտութեան և հապաղաշտութեան դէմ, որոնք կը յառաջանան կեանքի բոլոր մարդերուն մէջ: Մարտնչիլ պէտք է այս հզօր ալիքին դէմ, պէտք է խաչը վերցնել եւ անոր բիւր անգամ փորձուած ոյժն ու զօրութիւնը անգամ մը եւս ցցել նիւթապաշտութեան հեղեղին դէմ որ ամենուրեք աւերներ կը գործէ: Պէտք է նոր Վարդաններ զայն բռնելու եւ դէպ ի յաղթանակը տանելու: Երբոր շուրջերնիս նայինք մարդիկը այնքան նիւթապաշտ եւ անձնասէր դարձած կը տեսնենք որ երբեմն կը յուսահատինք, միթէ խաչը անգամ մը ևս պիտի չկարենան յաղթել: Պատմութիւնը լի է անոր յաղթանակներով, բայց մենք հաւատքի պէտք ունինք: յաղթանակի հաւատքը կարծես կը պակսի մեզի:

Ուրիշ բան մը, այն ալ Վարդանի եւ իր ընկերներուն անձնագոհութիւնն է: մենք ինչքան պէտք ունինք այդ առաքինութեան ներկայիս: Մեղքին դէմ յաղթանակելու միակ միջոցը տառապանքն ու անձնագոհութիւնն է: Քրիստոսի կեանքն ու օրինակը ասոր լաւագոյն ապացոյցներն են: Այսօր մարդիկ չեն ուզեր տառապիլ իրենք իրենց համար, ա՛լ ո՛ւր մնաց տառապիլ ուրիշներուն համար: Նոր հոգի մը պէտք է որ իրենը առ ոչինչ համարէ

դրացիին փրկութեան համար: Չոհուիլ պէտք է եթէ փրկել կուզենք: Գողգոթայ պէտք է եթէ երբեք կեանք տալ կուզենք: Քրիստոնէութիւնը սիրոյ եւ զոհողութեանց կրօնքն է, իր հիմնադրէն սկսեալ մինչեւ իսկ այս երկու հազար տարիներ յետոյ, մարդիկ սիրեր են, տառապեր են, զոհուեր են որպէսզի այն ապրի եւ տարածուի: Յիսուս զոհողութեան տիպարն է եւ անոր կեանքը ինչպէս Վարդաններու ներշնչի է, պէտք է նմանապէս մեզ ալ ներշնչէ եթէ երբեք կ'ուզենք որ չարիքը քիչնայ:

Մեղքի եւ չարիքի դէմ պայքարը քաջասիրտներու պէտք ունի: Աւարայրի բարոյական յաղթանակը ինչքան բան կը պարտի այդ անվահեր եւ անվախ սրտերուն որ Վարդանի եւ իր ընկերներուն սրտերուն ներքեւ կը փափախէր: Մեր մէջ սովորութիւն դարձած է այդ օրուան հերոսին «Բաջն» մակդիրն կցել: Անոր մէջ կընշմարենք անվախ սիրտ մը որ չի յուսալքուիր իրմէ եռապատիկ թուով ոյժերու դէմ, հապա անոնց տեսքը իր գիտակցութիւնը կ'աւելցնէ որը իր կորովին է քաջութեան վրայ բան մը եւս կ'աւելցնէ: Չարիքի ներկայութիւնը իրեն խթան մը կը գառնայ եւ մենք կը տեսնենք Վարդանը առաջին գծին վրայ: Այն նախադրածակ է, չի սպասեր որ թշնամին յառաջանայ, կ'ուզէ ինք անձամբ երթալ եւ չափուիլ անոր հետ: հոգ չէ թէ այն Գողգոթայով մը վերջանայ իրեն համար: Ներկայ դարս ինչքան պէտք ունի քաջերու եւ արիւնիներու: Մեղքի իշխանութիւնը տապալելու համար արիասիրտներու պէտք կայ: Բարոյական արիութիւնն է հարկաւոր: Ինչքան բարի տրամադրութիւններով մարդիկ իրենց քաջութեան պակասութեան համար ծոյլ կը նստին, որոնք ահուղողի մատնուած են, անչարժացեր են մինչեւ որ մեղքի ահագին յորձանքը գիրենք ալ քշիր տարեր է

դէպի գահավիժ անգունդները: Անկողմնակալ զիւսող մը տհաճին չարիք պիտի տեսնէր ներկայ ընկերային կազմուածքին մէջ. ահաւիլ պատերազմներ կը մղուին նիւթի եւ շահի համար. զիտուածները չարաչար կը զործածուի. դժոխային մեքենաներ կը հնարուին մարդասպանութիւնը լայն չափով յառաջ տանելու. մարդիկ զիրար կը կողոպտեն եւ կը բզբտեն վաճառագործար, անբարոյութիւն առեւտուրի մէջ, շուկաները, ընկերութեան օրակներէն ներս: Ասոնց ամենուն դէմ կանգնող հերոսներու պէտքը կայ:

Վերջին կէտ մը, այն ալ Վարդանի եւ իր ընկերներուն նահատակումն է: Ինչպէս Վարդան, կարմրեցաւ Աւարայրի դաշտը, որպէսզի իր հաւատքի առարկան չհղճանուի: Պայքարը շարիքի զէյրածախ ֆիզիքական մահով կը վերջանայ: Այդ բաժակը ըմպած են գրեթէ պատմութեան բոլոր բարձր ազնիւ հոգիները: Հեթանոս աշխարհի Սոկրատէս սկսեալ, հրեայ մարգարէներէն շատերը, նոյն ինքն Յիսուս, ծանօթ եւ անծանօթ բիւրաւոր առաքեալներ, միսիոնարներ, Ճան Ջրս եւ իր նմանները, ընկերային բարեխառնութեան համար աշխատող նոր օրերու մարգարէներն ու գործիչները, եւ այն անհամար հերոսները որոնք նահատակուած են խարոյկնելու եւ խաչելու վրայ, զնաանհերու խորքերը, եւ կամ կայքին կամ ետթաղանի ահարկու հարուածներուն ներքեւ: Աշխարհ աւանդ կազմուել է որ, չարիքի դէմ պայքարը միշտ զոհեր եւ նահատակներ կը պահանջէ. «մեռնիլ ապրելու համար» բարոյական անյեղլի օրէնք մըն է: Բնական աշխարհն ալ այս հիման վրայ կանգնած է, ատիկա անհրաժեշտ պայմանն է էութեան. կեանքը մահէն կը բղխի, որպէսզի ցորենը բուսնի պէտք է որ սերմը մեռնի: Բարոյական եւ հոգեւոր մահէն ազատելու համար յաճախ ֆի-

զիքական մահուան պէտք է յօժարինք: Ուրիշները բարոյական մահէն փրկելու ճամբան յաճախ խաչ կը պահանջէ: Հայ ազգը Քրիստոնեայ պահելու համար պէտք է Վարդաններ նահատակուին. Քրիստոնէութիւնը տարածելու համար մարտիրոսներ պէտք են. Աստուծոյ Թա՛գաւորութիւնը հաստատելու համար Յիսուսներ պէտք է խաչուին. մեղքը խաչելու համար երբեմն մարմինն ալ պէտք է միասին խաչել: Մենք ինչքան գերազաս պէտք համարենք մարմնոյ մահը քան թէ բարոյական եւ հոգեւոր մահացումը: Մեղքով փտտած մարմին մը ի՞նչ շահ կրնայ ունենալ մեզի եւ թէ մեր շուրջիներուն. ապա թէ ոչ աւելի աղականութիւն եւ աւելի անտեղի: Եթէ մեր բարոյական ամբողջութիւնը կը պահանջէ որ մեռնինք, պէտք է մեռնիք. քանզի ատիկա խաչի ճամբանն է: Յիսուս կ'ըսէ. «Մի վախնաք անոնցմէ որ մարմինը կ'սպանեն ու անկէ ետեւ աւելի բան մը ընելու իշխանութիւն չունին. հապա աւելի անկէ վախցէք որ կըրնայ հոգին ու մարմինը գեհեմին մէջ կորսնցնել... քանզի ինչ օգուտ է մարդուն որ բոլոր աշխարհը վաստակի եւ իր անձը կորսնցնէ կամ իր անձին համար ինչ ազատչէք պիտի տայ մարդ»:

Ահա ա՛յս պէտք է ըլլայ Վարդանանցի պատգամը աշխարհին եւ մեզի: Մղուելիք շատ պատերազմներ կան դեռ... անցնելիք շատ տղմուտ գետեր... եւ իշխալիք շատ Աւարայրներ...:

Յիսուս կ'ըսէ. «Ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի ծայրերը...» Այն մեզի հետ է մեր բոլոր պայքարներուն մէջ, ըլլայ մեղքի դէմ միայնակ կոռուած ատեննիս եւ ըլլայ ընկերային կարգերը Քրիստոնէացնելու համար պայքարած ատեններու: Իր կեանքը եւ իր բոլոր ճշմարիտ հետեւորդներուն կեանքերը, որոնց մէջ իր հոգին մարմնացիր է, մէյ մէկ ներշնչարաններ են մեզի համար. ասկից կըր-

նանք հաւատք, քաջութիւն, և անձնագոհողութեան հոգին ստանալ մեր ապագայ պայքարներու համար:

Ուրիմն ինչո՞ւ վախնանք և ինչո՞ւ Լրկմտինք. «Ո՞վ պիտի կրնայ զատել մեզ Քրիստոսի սէրէն և Լրկն համար աշխատելէն: Թէ՛ այս աշխարհ և թէ՛ ալ պաշտօնը հոգւով հերոսներուն կը պատկանի: «Երանի է ձեզի, երբ կը նախատեն ձեզ և կը հաւածեն ինծի համար, ցնծայէք և ուրախ եղէք վասնզի ձեր վարձքը շատ է երկնքի վրայ, քանզի այս կերպով հաւածեցին ձեզմէ առաջ եղած բոլոր մարգարէները... և ազնիւ հոգիները»:

Պէյրուք

Պ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ (4)

Իր հայրապետական երկրորդ առօրին՝ Մեծն Ներսէսի ստեղծագործող հանճարը արդէն կազմած էր որոշ ծրարիւ մը, իւր մտքին մէջ տակաւին, զոր կ'ուզէր կիրարկել՝ ժողովրդական ընդունելութեան բովէն անցընէլէ վերջ: Ուստի՝ անմիջապէս ժողով կը գումարէ Աշտիշատի մէջ, ուր կղերական դասուն հետ՝ արքայական և նախարարական գերդաստաններու ներկայացուցիչներն ալ իրենց մասնակցութիւնը կը քերեն: Ժողովը՝ լսելէ վերջ Մեծ Հայրապետին ազգաշէն և անգուգական ծրագիրները, սիրով ընդ առաջ կ'երթայ անոնց և նիւթական հասոյթներու լայն աջակցութիւն մը կը քուէարկէ առաջարկուած նպատակները հաստատուն և տեսական հիմերու վրայ դնելու համար: Հո՛ս, ահաւասիկ ի յայտ կուգայ Մեծն Ներսէսի աննախընդաց հանճարը, ևսիրտունը և հոգածութիւնը, իր հոսիմ հսկողը:

Մեծն Ներսէս այս ժողովին ուղարկութեան կը յանձնէ ժողովուրդին ան-

տեսուած և լքուած դասակարգերուն վիճակը և կը յայտարարէ որ, ազգին ստուար մէկ տոկոսը, որը, անտէր, ազքատ, այրի, ծեր և ուրուկ (ըտրոտութիւն որ Յիսուսի օրով կար) երեսի վրայ ձգուած, տառապալի գոյութիւն մը կը քաշկուտէր: Թէ՛ կղերական դասակարգը, անբաւարար և տկար, չէր կրնար ժողովուրդի կարիքներուն հասնիլ: Թէ՛ հեթանոսական շրջանէն արմատ ձգած կարգ մը կռապաշտ սովորութիւններ, կ'ապականէին քրիստոնէութեան սուրբ նկարագիրը և կ'աւրէին ազգին բարքերը: Ուստի՝ իբրեւ մեծ քարեկարգից մը, կ'առաջարկէ. Ա. Յարմար վայրեր՝ շինել հիւանդանոցներ անկելանոցներ, ուրկանոցներ և նման բարեգործական հաստատութիւններ: Բ. Կարգի դնել եկեղեցական արարողութիւնները, և կատարուած պաշտամունքները հրապարակային ու հանդիսաւոր եղանակով մը ներկայացնել ժողովուրդին: Գ. Բազմացնել ուսեալ կղերականութիւնը և զանոնք մեկուսացնել վանքերու և կուսանոցներումէջ, փրկելու համար զանոնք տիրող ընկերային ցոփ ու շուայտ կեանքի փորձութիւններէն: Դ. Արգիլել մահերու և յուղարկաւորութեանց առթիւ կատարուած եղերերգութիւնները, լալօնները, մազիրը փետտելու, երեսները ձանկուտելու, հոգի, մօխիւրի մէջ թաւալելու հեթանոսական սովորութիւնները, որոնք հոգւոյ անմահութեան և յաւիտեանական կեանքի դաւանութեանց դէմ հեղնանք մը դարձեր էին: Ե. Արգիլել մերձաւորներու ամուսնութիւնը, բան մը որ, ըմբոստացուցիչ հանգամանք մը ըլլալով, նայնիսկ քրոջ և եղբոր միջև ամուսնութիւն թոյլատրելու չափ անբարոյանալով: Նոյնպէս արգիլել արքեպիսկոսները, շուայ և գեղի կեանքը, պոռնկութիւնը և այլն: Զ. Խնայել ժողովուրդը, չնեղել պայն ծանր տուրքե-

բու տակ. դուքով և կարեկցութեամբ վարուիլ գերիներու հանդէպ, որոնք առնուելի չարչարանքներու տակ կը տըւայտէին, գրաստներու նման աշխատեցուցիով: Եւ ինչպէս յիշեցինք, այս բոլոր նորահաստատ հիմնարկութեանց համար, արքունի և նախարարական հոգեբէն հաստեթարեր կալուածներ նշանակել տուաւ, որոնց տարեկան եկամուտով անոնք հետզհետէ աւելի բարգաւաճ կեանք մը կ'ապահովէին:

Այս իմաստուն և հանճարեղ գործերէն միակ մէկը, պիտի բաւէր հայ ժողովուրդին անսպառ երախտագիտութիւնը հրաւիրելու Մեծ Հայրապետին հանդէպ: Ասկէ աւելին զոր հոս չեղանք կ'ուզեմ սա է որ, Մեծն Ներսէս առաջին և մեծագոյն ռահվիրան եղաւ ընթնող, յայտարարող և տարածող որ, միակ հոգի մը աշխարհին մեծ է և թէ՛ այդ լքուած, անտեսուած խեղճերու մէջ, աստուածային շունչ մը կայ և անոնց տառապող մարմինները, Տէրոջ տաճարներն են: Քրիստոնէական մեծագոյն պատգամներէն մին էր այս և այդ իր առաւելագոյն կարեւորութեամբ պաշտպանուեցաւ և փայփայեցաւ Մեծն Ներսէսի կողմէն: Հայոց ինչպէս նաև բոլոր հեթանոս ազգերու մէջ, Քրիստոսէ առաջ տկարներ, այրիներ, որբեր և մասնաւորաբար գերիներ հանրութեան մոռացումին և անարգանքին ենթարկուած, անարժէք նմոյշներ կը նկատուէին: Հոգիի մը արժէքը ցոյց տալու համար Փրկիչը մեծ պայքարներ մղած էր Փարիսեցիներուն դէմ, և այս ոգիով օծուն, Մեծն Ներսէս կը ջանայ փրկել այդ խեղճերու կարաւանները:

Հաղեպ

ՌԵՏՈՒՆԻ

(Շարունակելի)

ՈՐՉԱՓ ԵՐԿԱՐ ՊԻՏԻ ԱՊՐԻՍ

Այն գաղափարը թէ մարդկային կեանքի բնական շրջանը 70 տարիներէ կը բաղկանայ առաւել մըն է պարզապէս, որ ոչ միայն աւելորդ պաշտներու, այլ նոյնիսկ կարգ մը բժիշկներու կողմանէ կը ջատագովուի: Եթէ այս կարծիքը չիտակ ըլլար կեանքի շրջանը որոշող պատճառները անփոփոխելի և զիտութեան հաստեթութենէն հեռու եղած պէտք է ըլլային:

Այս կարծեցեայ բնական կեանքի շրջանը ոչ միայն փոփոխելի է այլ նաև՝ գիտական միջոցներով կառավարելի: Բայց ո՞ր կեանքի շրջանը անփոփոխ է, Հնդկաստանի՞ կեանքի շրջանը թէ՛ Նոր Զելանտայինը, Միացեալ Նահանգացի թէ՛ փանաֆայինը: Լո՞ր գրաւումը բնականն է և անփոփոխ կեանքի շրջան մը կը ներկայացնէ. աստիճանաբար՝ նը, որոնց մէջ մահերու թիւը միջինէն 15-20 առ հարիւր պակաս է, կամ փաստաբաններէն, որոնց մէջ մահերու թիւը միջինէն 5-15 առ հարիւր պակաս է, թէ ոչ բժիշկներէն, որոնց մէջ մահերու թիւը միջինէն շատ աւելի բարձր է:

Բազմաթիւ ապացոյցներ ունինք ցուցնելու թէ կենդանի գործարանաւոր զոյութիւններու, մարդն ալ մէջը ըլլալով, կեանքի շրջանները մեծ փոփոխութեանց ենթարկուած են արուեստական միջոցներով, և թէ կարգ մը գործարանաւորներու կեանքի շրջանները շատ աւելի երկար են քան ուրիշ մէկէ որ երբեք մարդուն չեն հասնում ըլլալ:

Ինչո՞ւ կրիայ մը 200 տարի ապրի բայց մարդը՝ միայն 70 տարի: Ինչո՞ւ չի կափայտին ներքին բջիջները 400 տարի ապրին բայց մարդկայինը՝ հազիւ 100 տարի:

Գիտական աշխատանքը մեզի կարգ մը նշանակալից կարևոր իրողութիւն-

ներ կուտայ: Շերեփիկը (գորտի ձագ) վաղահաս տոտիկներ ունեցած է՝ արուեստական կերպով իր միջավայրին մէջ թթուածինի քանակին փոփոխութեամբը: Նմանապէս պտուղի ճանճի կեանքին շրջանը մնականոնէն 900 անգամ աւելի երկնցուած է զայն վարակումէ և թունաւորումէ պաշպանելով և իր միջավայրին ջերմութեան աստիճանը ցածընելով: Քարէլի փորձովը կարելի եղած է վառեակի սաղմի մը բջիջները 17 տարի կենդանի պահել՝ միջավայրի կարգ մը աղբեղութիւններուն զէմ վանոնք պաշպանելով:

Երբ մարդկային կեանքի փուլերուն ազդող պատճառները նկատի առնենք, կը տեսնենք որ տկարամիտը, որ պարզապէս որոշ մէկ գեղձի թերի կազմին կենսաբանական մէկ խեղճ արտադրութիւն է, կրնայ բնականոն վիճակ մը ստանալ գեղձային շինուկի մը զործածութեամբը: Վտանգաւոր անարիւնութենէ մեռնող մը, որ սկզբունքով ծերութենէ մեռնողէն շատ չի տարբերիր, լեարդէ արտադրուած շինուկով մը փրկուած է:

Նոյն իսկ սերմի բլազման, որ մինչև հիմա անձեռնմխելի նկատուած էր, կարելի եղած է գիտական ազդեցութեան ենթարկել, և գորտի, թռչունի նման բարձր անասուններուն մէջ սեռերու իրարու փոփոխումը (արական սեռը իգականին, իգական սեռը՝ արականին) կարելի եղած է աշխատանոցի մէջ: Մարդու նման բարձր զործանաւորութեամբ օժտուած արտաբաններուն մէջ տակաւին ասիակ կարելի չէ եղած՝ պարզապէս մեր թերի գիտութեան պաածառաւ:

Ներկայիս մարդու մը ծնունդին՝ անոր կեանքի շրջանը, ակնկալուած երկարութիւնը միջին հաշուով 58 տարի է: Յիսուն տարեկան եղած մարդ մը, բաւական, 21 ամեայ կեանք մը կրնայ ակնկալել: Բայց այս ակնկալութիւնը վերջին 100 տարիներու միջոցին չօշա-

փելի փոփոխութեան ենթարկուած չէ: Վերջին երեսուն տարիներու միջոցին 30է և մասնաւորապէս հինգ տարեկանէ վար եղողներուն մէջ միայն կեանքի միջին տեւողութիւնը երկարած է Սմիթիկայի մէջ. բայց Անգլիոյ և Սքոտլանտեան երկիրներուն մէջ գրեթէ ամէն տարիքի մէջ մահերու թիւը նուազած է:

Տեսնուած է թէ ապահովագրական ընկերութեանց գրուող մարդերէն անոնք որ պարբերաբար իրենք զիրենք բժշկական քննութեան կ'ենթարկեն և ւստացուած հրահանգներուն համեմատ կ'ապրին. մահերու թիւին մէջ 18 առ հարիւր նուազում մը կը ցուցնեն:

Ոչ թէ ծերութիւնը, այլ հիւանդութիւնն է որ մահ կը պատճառէ: Օլիվեր Ու. Հոլմէսի (88 տարեկան), Ի. Տալլրի (85), Թովմաս Ա. Էտիսլի (82), Էլիսու Րութի (84), Ճօրճ Փ. Պէյքլլի (89), և Ճան Տ. Րաքֆելլի (90) նման մարդոց կեանքերը կը ցուցնեն թէ կեանքի շրջանը 70 տարի ըլլալ չէ որոշուած:

«Որ անոնք կեանք եւ աւելի կեանք ունենան» պատգամին այսօր այնչափ պէտք կայ որչափ որ կայ Քրիստոսի ատենը: Ախտն է որ — մտային կամ ֆիզիքական — ապրիջանկութիւն յառաջ կը բերէ: Շոփէնհար ձիւղ է երբ կ'ըսէ:

«Առողջութիւն երբ կայ, ամէն բան հաճոյքի աղբիւր մըն է. առանց անոր ոչ մէկ բան կարելի է վայելել: Յիմարութեան մեծագոյնն է առողջութիւնը զոհել ունէ մէկ տեսակ երջանկութեան համար, ըլլայ շահի, յառաջդիմութեան, ուսումի, կամ հոգեկի եւ մարմնական հաճոյքներու համար:»

Տ. Ճ. Խ.

ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԵՕՂՈՒՆ-ՕՂՈՒԿ

Եօղուն-Օղուգ Մուսա լեռան նշանաւոր գիւղերէն մէկն է որ մօտաւորապէս 400.500 տարեկան կեանք մը ունի: Ա-

նիկա կառուցուած է լերան կողին վրայ, ուսկից կը տեսնուի Միջերկրական ծովը իւր գեղեցիկ տեսարաններովը: Այս գիւղի տեսարանը այնքան պէս պէս և զանազան պատկերներով կը ներկայացուի տեսնողին առջեւ որ ան իրապէս կը պարծենայ Եօզն-օլուգով: Այս գիւղին ծառերը կը բաղկանան գլխաւորապէս թթիւնի, ձիթենի, թզենի և դափնիէ: Բիշ ու շատ լեռնոտ է և ջուրը դժբաղդաբար հասնուի գիւղացիներուն պէտքերը կրնայ գոհացնել: 225 տուններ կան մօտաւորապէս 1200 հոգիներէ բաղկացած: Իրապէս այստեղի ժողովուրդը չափէն աւելի չարքաշ է և ըստիպուած են այդպէս ըլլալու, որովհետեւ ապրուստի պայմանները շատ դժնգակ և դժուարին են: Իրենք զբաղած են առաւելապէս սանտրագործութեամբ: Բայց միեւնոյն ժամանակ հողագործութիւն, շերամաբուծութիւն, անասնաբուծութիւն և քիչ մըն ալ վաճառականութիւն օրհնութիւններ եղած են քիչ ու շատ ապրուստի բեռը թեթեւցընելու: Կարելիութիւններ կան այս գիւղին մէջ, որով ժողովուրդը կրնայ աւելի բարեբաւտիկ տնտեսական պայմաններու տիրանալ, բայց յարկ դժբաղդաբար ուժեր կը պակսին սոյն կարելիութիւնները իրագործելու, — դրամագլուխի չընդոյութիւնը, կազմակերպող անհատներու քիչութիւնը և ընդհանուր համագործակցութեան սղին կ'արծես այս ուղութեամբ մեռնալ վիճակ ունի: Մի քանի հայրենասէրներու ջանքը այս ժողովուրդին տնտեսականը բարձրացնելու համար շատ քաջալերելի է բայց այս ապագայի հեռանկար մըն է:

Կրօնապէս այս գիւղը 3 յարանուանութիւններու բաժնուած է: Անշուշտ Լուսաւորչականները կը կազմեն մեծամասնութիւնը: Կան 200 տուն Առաքելականներ, ունին շատ հին եկեղեցի մը որուն պարտէզները և կալուածները համեստ և

կամուտ մը կ'ապահովեն անոր: Կանոնաւոր և տեղացի հովիւ մը չ'ունին, բայց Բէպուսիյէի քահանան իրենց կրօնական պէտքերը կը հոգայ և կանոնաւոր կերպով մը կը կատարէ եկեղեցիի պաշտամունքները: Փառք կ'ուտանք Աստուծոյ որ մեր քոյր եկեղեցին համարալի է մեզի հետ և երբեմն մեծ տօներու տոթիւ կը հրաւիրեն Բող. քարոզիչը որպէսզի քարոզէ իրենց: Լուսահամայնքը ունի իր մանկապարտէզը և բարձրագոյն դպրոցը, որոնք Անտիոքի կառավարութեան հսկողութեան տակն են: Սոյն կառավարութիւնը կը վճարէ ուսուցիչներու ամսականը:

Կաթոլիկութիւնը բոյն դրած է այս գիւղին մէջ 1895ին, կայ եկեղեցի մը, բայց հովիւէ չուրկ: Անցնալ տարի և այս տարուան սկիզբները իրենց մասնաւոր դպրոցը ունէին բայց հիմակ փակուած է ան:

Կալով մեր Աւետ. եկեղեցիին, այն ունի մօտաւորապէս 60 տարուան կեանք մը, այսինքն Աւետ. շարժումը այս գիւղի մէջ սկսած է 1870ին: Հիմնադիրը եղած է Պիթիասի քարոզիչ Մովսէս էֆ. Ֆիլեան որուն յաջորդած են բազմութիւն քարոզիչներ եւ պատուելիներ: Առաջին պաշտամունքը տեղի ունեցած է պարզ եւ խոնարհ խրճիթի մը մէջ որը կը պատկանէր Աթաշեան ընտանիքին: Կրօնական տար եկեղեցի մը ունինք որ թէ կրօնական եւ թէ կրթական նպատակներու կը ծառայէ: Քարոզիչին համար շինուած է շէնք մը որ կը բաղկանայ չորս սենեակներէ:

Պատերազմի պատճառաւ և ուրիշ գանազան դէպքերու հետեանքովը այս եկեղեցիին պատկանող ընտանիքները քիչցել են, հիմակ կան մօտաւորապէս 16 ընտանիք: Եկեղեցիին տպագրոյ սիւնը պիտի ըլլայ անշուշտ իւր երիտասարդութիւնը, բայց ցաւալի է որ տըն-

տեսական բեռին տակ ընկճած մեր երիտասարդները ամեն տարի կը գաղթեն արտասահման. 9—10 ամիս առաջ ունէինք մօտաւորապէս 20 երիտասարդներ լայց հիմակ այդ թիւը իջած է 12ի: Այս երիտասարդներուն քիչ թէ շատ խնամք կը տարուի: Ծառաթը երեք անգամ զիշերային դասաւանդութիւններ կ'ըլլան, որոնց Ե—9 հոգի կը յաճախեն: Ծարաթ իրիկունը առհասարակ ընկերային երեկոյթի հանգամանք ունի, ուր առոյգ և չարքաշ երիտասարդներ կ'երգեն ազգային և հոգեւոր երգեր, կը կարգան թերթեր և կը լսեն զուարճալի պատմութիւններ: Ուրախ ենք որ այս երիտասարդները շատ քիչ բացառութեամբ իրենց եկեղեցիին յառած են և կը մասնակցին թէ առտուան և թէ իրիկուան աղօթքներուն, որոնք հայերէնով կ'ըլլան: Եկեղեցին կը կառավարուի երեք հոգիէ բաղկացած մարմնի մը կողմէն: Եկեղեցի եկողներուն թիւը միջին հաշուով առտուն 40 է, իսկ իրիկունը 65—70, կանոնաւոր աղօթատեղիներ չ'ունինք, բայց եւ այնպէս երբ ժողովուրդը դադրած կ'ըլլայ ծանր զործերէ՝ աղօթատեղիներ կ'ըլլան եւ առհասարակ տեղի կ'ունենան ձմեռուան եղանակին: Պիթիաթի յարգուած հովիւը, Վեր. Տ. Անդրէասեան, երբեմն իր աշակցութիւնը կը բերէ այս եկեղեցիին, թէ՛ քարոզախօսութեան եւ թէ՛ ներքին կ'սովորեցնողութեան տեսակէտով:

Ունինք դպրոց մը՝ օժտուած փորձառու եւ Մարաշի Աղջկանց Գոլէճէն չըջանալով վարժուելով մը, յանձին Տիկ. Արուսեակ Տարազեանի: Մօտաւորապէս 65 երկսեռ աշակերտներ յանձնուած են անոր խնամքին: Աշակերտներէն 24ը տղայ, իսկ 41ը աղջիկ են: Ամէնքն ալ շատ եռանդուն կ'աշխատէին: Ֆրանսերէն ուսուցումը կը կատարէ տեղւոյն քարոզիչը: Մանկապարտէզին կը հսկէ վարժուելիս դուստրը:

Վարժուելիս ամսականին 1/8ը միայն դպրոցի աշակերտութիւնը կ'ուսայ: Եօղուն-Օրուգ ԿԱՐԱՊԵՏ ԹԻԼՔԵԱՆ

ՀԱԼԼՊԻ Ե. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Այս նոր տարուայ փետրուար 2ին Հալէպի քոլոր երկսեռ Զանա սիրաց ընկերութիւնները միացեալ ժողով մը ունեցան Ազիզիէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ մէջ, կազմակերպուած տեղական երկսեռ վարչական միութիւններու կողմէ: Ժողովը սկսաւ 10.30ին Արար երիցական եկեղեցւոյ հովուին վեր. Ապտիւլ Քէրիմի աղօթքով:

Երգիչ խումբը երգ մը երգելէն վերջ օրուան առաջին բանախօսը, Վեր. Վիալըրսուն, անգլերէն լեզուով խօսեցաւ որ վերջը հայերէնի թարգմանուեցաւ Պր. Մ. Պալիկեանի կողմէ լեզուն եւ ամփոփ կիրպով: Նիւթն էր Մեր Ե. Ք. Զանից ընկերութիւններու ուխտին առաջին մասը: Երգ մը երգուելէն յետոյ խօսեցաւ Պատ. Տ. Արշաքեան, «Երիտասարդ Միանք» նիւթին շուրջ: Ան ըսաւ թէ երիտասարդութիւնը այն շրջանն է երբ հոգին, տակաւին թարմ և զգայուն, միշտ հաղորդական է գինքը շրջապատող իրերուն, գէպքերուն, մանաւանդ անձերուն և անոնց ներքին ապրումներուն, միշտ բաց ընդունելու նոր ճշմարտութիւններ, նոր զրգիւններ, լսելու նոր կոչեր պարտականութեան. միշտ վառ պահենք այս յատկութիւնը հոգիով երիտասարդ մնալու համար: Օրուան նախազանն ալ միքանի խօսքերով շեշտելէն յետոյ բանախօսին խօսքերը, յօտնկայս երգերնք ընկերութեան քայլերը: Վեր. Վիալըրսունի աղօթքով եւ Օրհնութեամբը, ներկաները մօտաւորապէս 500 հոգի իրարմէ գատուեցան տանելով խիստ հաճելի տպաւորութիւններ:

ԹՈՐՈՍ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՇՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ագուս քարգնանութիւն Չադր Տիֆլիսի
գրուածնեհեմ

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԵԲ ՈՐԻՆԵՐՈՒՆ ՍՌԱԶԻՆԸ

«Ո՛ր վոգի», բացաղանչից Սքրուճ, «ա՛լ հերիք է, զիս տուն տար, հերիք չարչարեա զիս, ա՛լ չեմ կրնար գիմանալ»

— Միայն մէկ տեսարան մնաց, պատասխանեց ոգին:

«Հերիք է, կ'աղաչեմ, ալ տեսնել չեմ ուզեր» գոչեց Սքրուճ պաղատելով:

Սակայն ոգին զայն իր թեւերուն մէջ առած ուրիշ սինեակ մը առաջնորդեց, ուր ամէն բան շատ սիրուն էր, կրակաբանին քով գեղեցիկ տիկին մը կը նստէր, ասիկայ այնքան նման էր իր նախկին նշանածին, որ Սքրուճ կարծեց թէ նոյն ինքն էր. սակայն քիչ մը առննան տեսաւ անոր աղջիկը, ու չորս կողմը նայելով տեսաւ նաեւ ուրիշ մանուկներ, ամէնքն ալ խիստ գեղեցիկ, ուրախ ու երջանիկ, կը խօսէին, կը խաղային, ու կը ցատկորտէին զարնան զուարթ ու անմեղ թուռններուն նման:

Յանկարծ տանը դուռը զարնուեցաւ. ու քիչ մը վերջ սեմին վրայ երեւցաւ հայրիկը՝ որ մեծ ծրար մը Մնունջի նըւէրներ իր հետը տուն բերիր էր: Տղայոց ուրախութիւնը չափ ու սահման չունէր, ինչ աշխոյժով անոնք նիստուեցան իրենց հօր վրայ, մէկը անոր վիզէն կախուեցաւ զայն համբուրելու, միւսը ծրարը կը քաշէր անոր մէջինը ժամ առաջ տեսնելու համար, իսկ տիկինը ծղպտուն զէմքով ու գոհունակ սրտով կը վայելէր այս յոյժ երջանիկ տեսարանը:

Սքրուճի հետաքրքրութիւնը երթալով կ'աւելնար, մանաւանդ երբ տեսաւ թէ հայրիկը աթոռի մը վրայ նստաւ, իր մեծ աղջիկը քովը, ու միւս կողմը տիկինը:

«Հ, կը խորհէր Սքրուճ, ինչ գեղեցիկ են անոնց ամէնքն ալ, ինչ հաճելի է այստեղ առնն բան, ու մեքենաբար զարձաւեան նայելու, եւ աւագ, ինչ արտուր հաղապատկեր, իրեն անանկ թուեցաւ թէ գարնանային զրախար ու ձմեռնային պոզ ու անոնք անսմարանի մը տարբերութիւնը կար իրենց միջեւ: Ու աչքերը մթննալ ակնոն: Նոյն տուն «Պէտք լին», ըսան մարդը ժպտուն զէմքով մը իր կնոջ գտնուելով, «նոյն իրիկուան զէմքու հին բարեկամդ տեսայ»

— Ստ ո՛վ է, հարցոց տիկինը:

«Գիտցիր նայիմ»

— Ի՞նչպէս գիտնամ... օ՛, օ՛, հասկըցայ», ըսաւ, եւ երկուքը միտսին սկսան խնդալ, «հասկցայ, հասկցայ, Սքրուճն է:

«Այո, գիտցար, պարոն Սքրուճն էր: Իր խանութին առջեւէն կ'անցնէի, ներս նայեցայ, մո՛մ մը վառեր էր, եւ միս միւսակ կը նստէր հոն. լսեցի թէ իր ընտանիքը մահաւան անկողնոյն մէջ պառկած է, յոյս չըկալ ա գրեթէ, իսկ ինքը միայնակ կ'աշխատի, խեղճ մարդ, աշխարհիս վրայ ոչ ոք ունի»

«Ոգի՛, ոգի՛, կ'աղաչեմ զիս ազատէ աս տխուր տեսիլքէն, ա՛լ չեմ ուզեր հոս մնալ», աղերսեց Սքրուճ սրտածմիկ ձայնով մը:

— Բայց այս բաները տեսիլք չեն, դուն գիտես որ ճամարտապէս տեղի ունեցած իրողութիւններ են, ինչո՞ւ չես ուզեր զանոնք տեսնել:

«Գիթա՛ ինձ, կ'աղաչեմ, ալ հերիք է, զիմանալու կարողութիւն չունիմ», գոչեց, միևնոյն աղերսաւոր եղանակով:

Սքրուճ այն ատեն զարձաւ եւ ոգիին նայեցաւ. ճրագը տակաւին կը վառէր խիստ փայլուն լոյս մը սփռելով չորս կողմը: Ու տեսակ մը անրացատրիկ թմրութիւն եկաւ վրան, այնպէս որ չը կրցաւ որոշակի հասկնալ թէ ինչպէ՞ս վերջապէս կըցաւ մարել ճրագը, թէ ինչպէ՞ս ոգին աներեւոյթ եղաւ, ու ինքը առանց իր հապուստները հանելու անկողնոյն մէջ ինչալով խորունկ քունի մէջ ինկաւ:

(Շարունակելի) (14)

صاحب الامتياز و مدير المسئول

قيس قريش هاروتونيان